ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2021-10-2-Ա

ք. Երևան 11.11.2021թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2021 թվականի նոյեմբերի 11-ի նիստում քննարկեց 2021 թվականի օգոստոսի 11-ին լիազորված անձ Շավարշ Փեթակչյանի կողմից ներկայացված՝ St. Jakobskellerei Schuler & Cie AG Schwyz ehemals Johann Jakob Castell & Cie ընկերության (Franzosenstrasse 14 CH-6423 Seewen (CH)) «noa NOAH OF ARENI» (IR1503898) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.
«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ կետի և ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի N 1017-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի 93-րդ կետի 7-րդ ենթակետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը սպառողներին կարող է մոլորության մեջ գցել ապրանքների կամ ծառայությունների աշխարհագրական ծագման, դրանց որակի, բնույթի կամ արտադրողի վերաբերյալ հարցերում: Այսպիսի նիշերից են այն նիշերը, որոնք իրենց բնույթով կամ ներառված առանձին տարրերով սպառողին կարող են մոլորության մեջ գցել: Տվյալ դեպքում հայտարկված ապրանքային նշանը ենթակա չէ գրանցման «գինի» ապրանքի համար, քանի որ իր մեջ պարունակում է «ARENI» բառն, որը կարող է սպառողներին մոլորության մեջ գցել ապրանքների բնույթի և աշխարհագրական ծագման հարցում, այն է՝ սպառողը կարող է կարծել, թե գինին արտադրված է Արենի տեսակի խաղողից, կամ էլ Արենի գյուղում՝ վերջինս հանդիսանում է գյուղ Հայաստանի Վայոց ձորի մարզում, սակայն հայտը ներկայացված է Շվեյցարական ընկերության կողմից: Անդրադառնալով Ձեր նկատառումներին՝ առ այն, որ հայտատուն արդեն իսկ ունի «ARENI» մակնշմամբ ավելի վաղ ապրանքային նշան, ցանկանում ենք նշել այն փաստը, որ վերջինս գրանցված է «կարմիր գինիներ Արենիից» ապրանքի համար, ուստի այն չէր կարող մոլորության մեջ գցել սպառողներին, իսկ

հայտարկված ապրանքային նշանը խնդրարկված է «գինիներ» ապրանքի համար, որն էլ կարող է սպառողներին մոլորության մեջ գցել ապրանքների բնույթի և աշխարհագրական ծագման հարցում:

Կոլեգիայի նախագահը հիմք ընդունելով բողոքարկողի կողմից նշված այն փաստը, որ հայտատուն միջազգային բյուրո է ներկայացրել ապրանքների ցանկի սահմանափակում թողնելով «կարմիր գինիներ Արենիից» ապրանքները բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքն ամբողջությամբ բավարարելու, կրկնական փորձաքննության որոշումն ամբողջությամբ չեղյալ ճանաչելու և ապրանքային նշանը գրանցելու մասին:

Լիազորված անձը համաձայն էր կոլեգիայի նախնական քննարկման արդյունքների հետ:

Փորձաքննության բաժնի պետը նույնպես համաձայն էր կոլեգիայի նախնական քննարկման արդյունքների հետ:

Ամփոփելով ընդհանուր քննարկումը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 1-ին ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը քվեարկության արդյունքում միաձայն.

Ո Ր Ո Շ Ե Ց

Լիազորված անձ Շավարշ Փեթակչյանի կողմից ներկայացված բողոքն ամբողջությամբ բավարարել, կրկնական փորձաքննության որոշումն ամբողջությամբ չեղյալ ճանաչել և «noa NOAH OF ARENI» (IR1503898) ապրանքային նշանը գրանցել 33-րդ դասի «կարմիր գինիներ Արենիից» ապրանքների համար:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ՌԱՖԱՅԵԼ ԳԵՎՈՐԳՅԱՆ